

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի
ներքին աուդիտի բաժնի 2014թ հաշվետվություն**

Ներքին աուդիտի բաժինը ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները, 2014թ. ընթացքում **47** միավորներում համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել ներառելով 2011, 2012, 2013 թվականները:

Աուդիտորները աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերել են բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա էլ կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

Վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում, կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են գործողության ծրագրեր:

Գործողության ծրագրերում աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին առաջարկություններ է արվել

1. Բարելավել կազմակերպության ներքին հսկողության համակարգը, ինչպես նաև վերացնել ներքին աուդիտի վերջնական հաշվետվություններում ներառված բոլոր թերությունները:

Հանձնարարվել է վերականգնել ՀՀ պետական բյուջե **3588166** ՀՀ դրամ, որը առաջացել է

- ԶԶ կառավարության 31 հունվարի 2008թ թիվ 196-Ն որոշման 13-րդ կետի պահանջները խախտելու հետևանքով **2927865 ԶԶ դրամ**՝ ուսումնական հաստատություններում վարչական աշխատողները /տնօրեն, փոխտնօրեն/ կարող են ունենալ շաբաթական մինչև 8 դասաժամ, իսկ կես դրույքով պաշտոնավարող և համապատասխան որակավորում ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչական աշխատողը՝ տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն

- ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգի բյուջետային հիմնարկների ըստ վարձատրության խմբի դասակարգման չափանիշները՝ մանկավարժական աշխատողների կարգերի սխալ տարբերակման հետևանքով **68005** ՀՀ դրամ:
- ՊՈԱԿ-ի կանոնադրության պահանջները խախտելու՝ ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակների և ՊՈԱԿ-ի խորհրդի որոշումների անհամապատասխանության հետևանքով **193000** ՀՀ դրամ:
- Վերականգնել ՀՀ պետական բյուջե ժամանակավոր անաշխատունակության նպատր սխալ հաշվարկելու հետևանքով առաջացած **399296** ՀՀ դրամ:

2014թ հոկտեմբերի 1-ի դրությամբ բյուջե է վերականգնվել **1478796** ՀՀ դրամ: .

Գործողության ծրագրերում ներառված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու և թերությունները վերացնելու համար աուդիտի ենթարկված միավորների ղեկավարների հետ կազմվել են ժամանակացույց մինչև 2014 թ դեկտեմբերի 28 -ը:

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի
2014թ տարեկան ծրագրով ուսումնասիրության ընթացքում արձանագրված
գումարների վերականգման ցուցակ առ 01.10.2014թ**

Հ/Հ	Միավորների անվանումը	Արձանագրված գումարը ՀՀ դրամ	Վերականգնված գումարը ՀՀ դրամ	Մնացորդ ՀՀ դրամ
1	Լեոնարոտի Գ. Միքայելյանի անվան մ/դ	111500	0	111500
2	Պարտիզակի մ/դ	161000	161000	0
3	Վ. Բազմաբերդի հ/դ	85000	85000	0
4	Սասունիկի Գ. Չաուշի անվան մ/դ	115000		115000
5	Ն. Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան մ/դ	71000	71000	0
6	Ջամշուի հիմնական դպրոց	80139	80139	0
7	Կանչի հ/դ	146240	146240	0
8	Ավանի Ա. Սերոբի անվան մ/դ	0		0
9	Ցամաքասարի հ/դ	152812	152812	0
10	Հակոյի հ/դ	93694	93694	0
11	Վ. Սասնաշենի Մ. Մանուկյանի անվան հ/դ	0		0
12	Արագածավանի թիվ 1 մ/դ	70000	70000	0
13	Կաթնաղբյուրի Մ. Գալշոյանի անվան մ/դ	0		0
14	Դրմասարի հ/դ	51178	51178	0

15	Գառնահովիտի մ/դ	77000	77000	0
16	Սորիկի հ/դ	53000	53000	0
17	Փարպի Ղ. Փարփեցու անվան մ/դ	193000	193000	0
18	Շենկանի հ/դ	33456		33456
19	Օրգովի Ա. Թրպաճյանի անվան մ/դ	255200		255200
20	Լուսազյուղի մ/դ	133000	45000	88000
21	Վարդենուտի մ/դ	188958		188958
22	Նորաշենի Ռ. Հարությունյանի անվան մ/դ	0		0
23	Կայքի մ/դ	0		0
24	Սարալանջի հ/դ	109000		109000
25	Սիփանի Ֆ. Ուսըվի անվան մ/դ	302881		302881
26	Հնաբերդի մ/դ	165905		165905
27	Արագածի թիվ 2 մ/դ	384284		384284
28	Մեծաձորի հ/դ	0		0
29	Զքնաղի մ/դ	39064	39064	0
30	Ռիա- Թագայի Ա. Ավդալի անվան մ/դ	200186		200186
31	Արագածի թիվ 1 մ/դ	35171	35171	0
32	Մաստարայի մ/դ	88382	88382	0
33	Կոշի	37116	37116	0
34	Ագարակի	155000		155000
	Ընդամենը	3588166	1478796	2109370

Ներքին աուդիտի բաժնի պետ՝

Սարգիս Մուրադյան